/18

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՍՊԴ_38_-2026
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 05 » 02 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ֆեդերացիա), ի դեմս նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Հարությունյանի, որը գործում է ֆեդերացիայի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N 692-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 240-Ա/1 և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հուլիսի 24-ի N 146-Ա/1 հրամանները (այսուհետ՝ հրամաններ)՝ «1041. Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «11001. «Հայաստանի Հանրապետության առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը ծրագրի իրականացման նպատակով ֆեդերացիային հատկացնում է որոշմամբ նախատեսված մինչև 16261.3 հազար (տասնվեվ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար երեք հարյուր) դրամ գումար՝ ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) ֆինանսավորման համար ֆեդերացիայի կողմից ներկայացված հայտի հիման վրա պետական մարմնի կողմից մշակված միջոցառման ծախսերի նախահաշիվը, իսկ ֆեդերացիան պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ ֆեդերացիայի կողմից իրականացվելիք միջոցառումները ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող Հավելված N 1-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ուսումնասիրելու և (կամ) ստուգելու ֆեդերացիայի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս

գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. ֆեդերացիայից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. որոշմամբ, հրամաններով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1. առանց հիմնավոր պատճառի ֆեդերացիան ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2. ֆեդերացիան երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

2.1.5. հետևելու միջոցառումների կազմակերպման, անցկացման կամ մասնակցության ընթացքին,

2.1.6. պարբերաբար վերլուծել ֆեդերացիայի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ,

2.1.7. հետ պահանջելու միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետի և հրամանների պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ֆեդերացիայից հետ պահանջել հատկացված ֆինանսական միջոցները կամ դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.9. հատկացնել միջոցառման ծախսերի նախահաշիվը գերազանցող, փաստացի կատարված, փաստաթղթերով հիմնավորված (այդ թվում ոչ ֆինանսական ցուցանիշների փոփոխության արդյունքում առաջացած) ծախսը պետական մարմնի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված դրական մասնագիտական եզրակացության հիման վրա,

2.1.10. ամփոփելու և գնահատելու ֆեդերացիայի կողմից ներկայացված տարեկան մարզական գործունեության ծրագրի կատարման արդյունավետությունը,

2.1.11. իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.2. Ֆեդերացիան իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը,

2.2.2 պետական մարմնից պահանջելու վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են ֆեդերացիային լիարժեք իրականացնելու իր գործունեությունը սույն պայմանագրի շրջանակներում,

2.2.3 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ ծրագրով նախատեսված դեպքերում իր և Ֆեդերացիայի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել Ֆեդերացիային, այդ թվում՝ Ֆեդերացիային ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2.կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. միջոցառումների կազմակերպման, անցկացման կամ մասնակցության նպատակով պետական աջակցության միջոցների շրջանակում, պետական մարմնի կողմից մշակված միջոցառման ծախսերի նախահաշվի սահմաններում, Ֆեդերացիային ապահովել համապատասխան ֆինանսական միջոցներով՝ համաձայն Հավելված N2-ի՝ վճարման ժամանակացույցի,

2.3.5. Ֆեդերացիայի ներկայացրած հայտում և պաշտոնական հրավերում արտարժույթով նախատեսված գումարը հատկացնել ֆինանսավորման հայտը կազմելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած տվյալ արտարժույթի փոխարժեքին համապատասխան:

2.4. Ֆեդերացիան պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.5. մինչև ֆինանսավորման ամսվան հաջորդող ամսվա 15-ը պետական մարմին ներկայացնել նախորդ ամսվա միջոցառումների իրականացման մասին բովանդակային (ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի վերաբերյալ տեղեկատվական նյութեր՝ էլեկտրոնային կրիչներով) և ֆինանսական հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տարեկան հաշվետվություն: Ֆեդերացիան պատասխանատվություն է կրում ֆինանսական և բովանդակային հաշվետվություններով ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Ֆեդերացիան պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.8. իրականացնել ծրագրերի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի հարթակները սոցիալական

հարթակներ չեն համարվում): Միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, սպորտային ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել ԿԳՄՄՆ մասնակցության ձևաչափը (ԿԳՄՄՆ ֆինանսավորմամբ, ԿԳՄՄՆ աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ սպորտային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով:

Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով** սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ ծրագրում կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել **ՀՀ Աշխատանքային օրենսգրքով** սահմանված կարգով,

2.4.10. հատկացված միջոցներն օգտագործել սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված Հավելված N1-ով նախատեսված միջոցառումների իրականացման համար՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

2.4.11. սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված Հավելված N 1-ով նախատեսված ծրագրի իրականացման համար ապահովել Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի, ուսումնամարզական հավաքների մասնակիցների և պատվիրակությունների կազմի ձևավորումը կամ ընտրությունը՝ համաձայն հրամանների,

2.4.12. միջոցառման ֆինանսավորում ստանալու հայտը ներկայացնել պետական մարմին՝ (հրամաններով հաստատված կարգի համաձայն) մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 15-ը, իսկ միջոցառումների ժամանակացույցի փոփոխության դեպքում՝ այն նախապես համաձայնեցնել պետական մարմնի հետ և այդ միջոցառման հայտը պետական մարմին ներկայացնել մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 25-ը: Ֆեդերացիան ընթացիկ տարվա ֆինանսավորման շրջանակներում կարող են ներառել նաև հաջորդ տարվա հունվար ամսին նախատեսվող միջոցառումների հայտերը,

2.4.13. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամաններով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են ֆեդերացիայում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.14. սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Պետական մարմնին վճարել տույժ՝ սույն պայմանագրի 5.3-րդ և 5.4-րդ կետերով սահմանված կարգով և չափով:

2.4.15. յուրաքանչյուր միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը վերադարձնել հետ՝ պետական մարմնի պահանջով,

2.4.16. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2027 թվականի հունվարի 24-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո: Ընդ որում ընթացիկ տարվա ֆինանսավորման շրջանակում հաջորդ տարվա հունվար ամսին նախատեսվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2027 թվականի փետրվարի 25-ը:

3.ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է ֆեդերացիային՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N2-ի՝ վճարման ժամանակացույցի:

4.2. Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ֆեդերացիան պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Ֆեդերացիայի կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Ֆեդերացիան պետական մարմնին վճարում է տույժ՝ միջոցառման գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում Ֆեդերացիային վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ միջոցառման չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի կամ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործողությունը տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա: Պայմանագիրը գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011032027

ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ.Հակոբյան

Կ. Տ.

ՖԵԴԵՐԱՑԻԱ

«Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

ք. Երևան, Սարյան 22

Բանկ՝ «Արարատ բանկ» ԲԲԸ

Հ/Հ՝ 1510040605970100

ՀՎՀՀ՝ 02502548

Էլ. փոստ՝ armeniaski@yahoo.com

Նախագահի Ժ/Պ՝

_____ Ա.Հարությունյան

Կ. Տ.

Հավելված N1
2026թ. 05.02 -ին
կնքված N ՍՊԴ-38-2026 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազ.դրամ)
1.	**Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա** **Դահուկավազք** ՀՀ առաջնություններ (մեծահասակներ – 2 ՀՀ առաջանություն մինչև 12-14-16 տարեկաններ-2, Մինչև 20 և 23 տարեկանների Աշխարհի առաջնություն-1 Զարգացող պետությունների գավաթ -1 Միջազգային վարկանիշային մրցաշար -1 **Լեռնադահուլակային սպորտ** ՀՀ առաջնություններ (մեծահասակներ – 2) ՀՀ առաջանություն Մինչև 14/14-16 տարեկաններ -2 , Միջազգային մրցաշար պատանիներ -4 Զարգացող պետությունների գավաթ -1 **Սնոուբորդ** ՀՀ առաջնություն -1 Զարգացող պետությունների գավաթ -1 դահուկային սպորտի և սնոուբորդի միջազգային ֆեդերացիայի սնոուբորդի մարզումային ճամբար-1 COVID-19 թեստի վճարի հատուցում Միջազգային և Եվրոպական ֆեդերացիաներին անդամակցությաան տարեկան վճար:	ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անց կացում	**«Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա»** հասարակական կազմակերպության կողմից մարզիկների պատրաստում և լեռնադահուկային և դահուկավազք մարզաձևերի ՀՀ առաջնությունների և միջազգային մրցաշարերի անցկացում, ուսումնամարզական հավաքների կազմակերպում և միջազգային միջոցառումներին մասնակցություն	**Արդյունքները** ա) տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության առաջնությունների մասնակիցների թվի աճ. բ) Հայաստանի Հանրապետության առաջնությանը մասնակցող մարզերի, քաղաքների, մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում: **Գնահատման չափանիշները** Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ:	ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը	16261.3
Ընդամենը						16261.3

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032027
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
Կ. Տ.

ՖԵԴԵՐԱՑԻԱ
«Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Սարյան 22
Բանկ՝ «Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 1510040605970100
ՀՎՀՀ՝ 02502548
Էլ. փոստ՝ armeniaski@yahoo.com
Նախագահի մոտ՝
Ա.Հարությունյան
Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
05.02 2026 թ. N ՍՊԴ-38-2026
պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» ՀԿ														
1041	11001	« Հայաստանի Հանրապետության առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում»												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												
		Եռամսյակ			Կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
«Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» ՀԿ-ի միջոցառումներ	4639	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3	16261.3
Ընդամենը		**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**	**16261.3**

Պետական մարմին՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Կառավարական տուն N 2, Վազգեն Սարգսյան 3

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032027, ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Կ.Տ. Հ. Հակոբյան

Ֆեդերացիա՝

«Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» ՀԿ
Երևան, Սարյան 22
Բանկ՝ «Արարատ բանկ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 1510040605970100 ՀՎՀՀ 02502548

Նախագահի ժ/պ՝

Կ.Տ. Ա. Հարությունյան